ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թ.
ԹԻՎ 5804

«ԷՍԷՍԹԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ե. ՅԱՅԼՅԱՆԻՆ
ՀՎՀՀ 03576331
(Հասցե՝ Կոտայքի մարզ, Վ. Պտղնի 1 փ. 58)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Աշտարակի համայնքապետարանի և ԷՍԷՍԹԻՍՊԸ-ի միջև 2024 թվականի օգոստոսի 26-ին կնքվել է ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/11-2 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրիան բաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

ԷՍԷՍԹԻՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները /մատակարարումը չի կատարվել/:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանգիրը.

ա) խախտվել է մատակարարման ժամկետը /մատակարարումը չի կատարվել/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԷՍԷՍԹԻՍՊԸ-ը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը ՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր 148800(հարյուր քառասունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամի չափով ՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով

<Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով ԷՍԷՍԹԻՍՊԸ-ին տրվում է 10/տասը/ օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 52500 /հիսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը և պայմանգրի ապահովման 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900445101083 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն ԷՍԷՍԹԻՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝
Հրայր Հակոբյան
*հեռ. (0232) 3-10-26*117*